ՄԵԾ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿՆ Է



Մեր շատ սիրելի հաճախորդ,

Ուրախությամբ տեղեկացնում ենք, որ մեկնարկել է Տիգրան Մեծ բնակելի համալիրի բնակարանների վաճառքը, որտեղ Ձեզնից յուրաքանչյուրը կգտնի իր և իր սիրելիների հարմարավետ և արժանավայել ապրուստը: Մեր մարդակենտրոն համալիրի նախագծման հիմքում դրվել են հայ մարդու կյանքի ամենակարևոր և անկյունաքարային նշանակության արժեքները՝ ընտանիքը և ընտանիքի յուրաքանչյուր անդամի հանգիստը, ժամանցը, անձնական տարածությունն ու հարմարավետությունը: Համոզված ենք, որ նոր բնակարանամուտ փնտրող ցանկացած անձ չի կարող անտարբեր մնալ մեր համալիրի նկատմամբ:

Տիգրան Նազարյան
Կառուցապատող «ՇԻՆԱՍ» ՍՊԸ-ի հիմնադիր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1-4 | ՏԵՂԱԿԱՑՈՒՄ

5-8 | ՄԵՐ ՇԵՆՔԸ

9-10 | ՄԵՐ ԲԱԿԸ

11-12 | ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ

13-14 | ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

15-16 | ՄԵՐ ԿԱՅԱՆԱՏԵՂԻՆ

17-22 | ՄԵՐ ՇՔԱՄՈՒՏՔԸ

23-26 | ՄԵՐ ՀԱՐԿԸ

ՄԵՐ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ | 27-36

ՏԻՊԱՅԻՆ 3D ՀԱՏԱԿԱԳԾԵՐ | 37-40

ՄԵՐ ՎԱՃԱՌՔԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ | 41-42

ՄԵՐ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ | 43-44

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ | 45-46

ՎԱՃԱՌՔԻ ԳՆԵՐ | 47

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԲԱՆԿ | 48

Այս կատալոգում մենք կպատմենք Ձեզ Տիգրան Մեծ համալիրի պատմությունը, որը կարող է դառնալ Ձեր կյանքի նոր էջը: Մասնավորապես մենք կպատասխանենք Ձեզ հուզող երեք հիմնական հարցերին.

1. **Ինչո՞ւ պետք է բնակարան ձեռք բերել Երևանի Մոնթե Մելքոնյան փողոցին հարող ԴԱԼՄԱՅԻ ԱՅԳԻՆԵՐ կոչված տարածաշրջանում:**

2. **Ինչո՞ւ պետք է բնակարան ձեռք բերել հենց Տիգրան Մեծ բնակելի համալիրում:**

3. **Ինչո՞ւ պետք է դա անել հիմա:**

ՏԵՂԱԿԱՅՈՒՄ

Համալիրը կառուցվում է Երևանի Մոնթե Մելքոնյան փողոցի խաղաղ հատվածում, խճուղուն հարակից ԴԱԼՄԱՅԻ ԱՅԳԻՆԵՐ կոչվող պատմամշակութային տարածքում: Ծենքն ունենալու է ավտոճանապարհային ելք դեպի Մոնթե Մելքոնյան փողոց: Գտնվելով Երևան քաղաքի հիմնական հանգստավայրերին, աշխատանքային և ուսումնական հաստատություններին շատ մոտ՝ համալիրի դիրքը միաժամանակ ապահովում է առավելագույն հանգստություն, ապահովություն և երբեմն այդքան ցանկալի լռություն:

ԵՐԵՎԱՆՅԱՆ ԼԻՃ

ԵՐԵՎԱՆ ՊԱՐԿ


ԿԻԵՎՅԱՆ ԿԱՄՈՒՐՋ

Իսկ Ձեր բնակարանների պատուհաններից և պատշգամբներից բացվում են անկրկնելի տեսարաններ դեպի Մասիս սարը, Երևանյան լիճը և նորակառույց Երևան Պարկը հարավում, մեր քաղաքի ամենագեղեցիկ և կանաչապատ մարգարիտներից՝ Մարզահամերգային համալիրը և Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը արևելքում, լուսապայծառ Կիևյան փողոցն իր ամբողջ երկայնքով հյուսիս-արևելքում, ինչպես նաև Արա լեռը՝ հյուսիսում: Նման տեսարանների բազմազանությունը Ձեզ և Ձեր սիրելիների համար կապահովի բարձր տրամադրություն և նորանոր լիցքեր յուրաքանչյուր նոր օրվա համար:

ՏԵՂԱԿԱՅՈՒՄ

Դարձեք նոր ձևավորվող պատմության մի մասնիկը

Մոնթե Մելքոնյան փողոցին հարող ԴԱԼՄԱՅԻ ԱՅԳԻՆԵՐՈՒՄ այսօր կառուցվում են բազմաթիվ շենքեր և թաղամասեր, ինչպես նաև մեր քաղաքի նորագույն ընտանեկան զվարճանքի կենտրոններից մեկը՝ Երևան Պարկը: Մոտ ապագայում Ձեզ հետ միասին մենք կտեսնենք ժամանակակից ենթակառուցվածքներով, սննդի և զվարճանքի կետերով, կանաչապատ և խնամված այգիներով մի նոր թաղամաս: Իսկ կառուցապատմանը համընթաց այստեղ ակտիվ կանաչապատում է իրականացվում, և շուտով բնակելի թաղամասին հարող տարածքներում կձևավորվի ժամանակակից Երևանի, թերևս, լավագույն զբոսավայրերից մեկը: Դարձեք այս գեղեցիկ պատմության մի մասնիկը՝ ձեռք բերելով բնակարան այս տարածաշրջանի ամենախոստումնալից համալիրում:


Վաճառքի
գրասենյակ
Լենինգրադյան 31/3
Լենինգրադյան փողոց
Կիևյան
կամուրջ
Կիևյան փողոց
Ծենքի
տեղակայում
Լենինգրադյան 27/7
Մարզահամերգային
Համալիր
Երևան
Պարկ
Մասիս

ՄԵՐ ԾԵՆՔԸ

Ժամանակակից ճարտարապետության լավագույն երանգներով համեմված Տիգրան Մեծ համալիրն ունի երեք մասնաշենք՝ 18, 16 և 14 փոփոխական հարկայնությամբ: Մասնաշենքերի դիրքն ու տեղն ընտրելիս մենք առավելագույնս հաշվի ենք առել արևի առկայության, բազմապիսի տեսարանների հասանելիության, միջմասնաշենքային ուղիղ տեսանելիության սահմանափակման և բազմաթիվ այլ հիմնարար նշանակության գործոնները: Այնպես, որ Ձեր բնակարանի պատշգամբն ու պատուհանները չեն ունենալու անմիջական տեսանելիություն դեպի հարևանների բնակարաններ: Մենք հարգանքով և պատասխանատվությամբ ենք մոտենում անձնական տարածություն ունենալու Ձեր ցանկությանը:

Կառուցապատման և շինարարական աշխատանքների հիմքում մենք դրել ենք <<Կառուցում ենք մեզ համար>> կարգախոսը, ինչն ինքնին պարտադրում է բարձրագույն աստիճանի պատասխանատվություն և հաշվետվողականություն մեր յուրաքանչյուր քայլում: Այդ է պատճառը, որ համալիրի կառուցման համար մենք օգտագործում ենք բացառապես և իրապես թանկարժեք շինանյութեր, ինչը շենքին տալիս է 9-9,5 բալ սեյսմակայունություն:

ՄԵՐ ԾԵՆՔԸ

Համալիրի արտաքին տեսքն ունի ոգևորող ինքնատիպ գեղեցկություն, որտեղ խաչվում և միաժամանակ փոխլրացնում են մոդեռնի և դասականի ճարտարապետական էլեմենտները: Իր լակոնիկ վեհաշուք ոճով, սպիտակ տրավերտինի ու սև տուֆի դասական համադրությամբ ճակատի երեսվածքով և բաց ապակեպատ պատշգամբներով շենքը հրաշալի կերպով համալրում է մայրաքաղաքի արդի ճարտարապետության բացառիկ նմուշների շարքը: Քարերի և գույների ընտրությունը կառույցին տալիս են թեթև և լուսավոր տեսք, իսկ ճարտարապետական, կոնստրուկտորային և նախագծային լուծումները այն դարձնում են անկրկնելի և ճանաչելի: Ձեր երազանքի շենքը դեռ այսքան մոտ չի եղել:

Ճակատի երեսվածքի շինանյութեր

3.8 անգամ ավելի ձայնա
և ջերմա մեկուսիչ

4.1% ջրակլանելիություն

Արտաքին պատի ընդհանուր
հաստություն՝ մինչև 27սմ

Ներսի շերտ՝ մինչև 10սմ պեռլիտի
և պեմզայի խառնուրդ

Միջին շերտ՝ երկաթբետոնային
հատուկ կոնստրուկցիա

Արտաքին շերտ՝ պեռլիտի, պեմզայի
խառնուրդ՝ երեսված տուֆի
և տրավերտինի հանքաքարով

Սև տուֆի խառնուրդ

Սպիտակ տրավերտինի խառնուրդ

Պեռլիտասալիկային սև տուֆի բլոկ

Պեռլիտասալիկային սպիտակ տրավերտինի բլոկ

Մ Ե Ր Բ Ա Կ Ը

Մենք լավ ենք գիտակցում, որ անկախ տարիքից հայ մարդու համար բակը միշտ ունեցել է հատուկ նշանակություն: Որքան պատմություններ և հիշողություններ ունի մեզնից յուրաքանչյուրը մեր բակի հետ կապված: Ահա այս արժեհամակարգը և հայեցակարգը ներդնելով՝ մենք ստացել ենք բակի լավագույն տարբերակը Ձեր և Ձեր սիրելիների համար:

Առավելագույնս աջակցելով առողջ ապրելա- կերպի գաղափարին՝ մենք ապահովում ենք բազմապիսի սպորտա-յին և ժամանցային հարմարություններ ցանկացած տարիքի բնակիչների համար: 2800 քմ զբաղեցնող մեր ընդարձակ բակում մանուկները կգտնեն իրենց խաղահրապարակը, պատանիները կոգտվեն ֆուտբոլի և բասկետբոլի դաշտերից, զբոսնել ցանկացողները կըմբոշխնեն մեր հատուկ լանդշաֆտային այգիները ու ճեմուղիները, հեծանվորդները կստանան հսկայական տարածություն հեծանվավազքի համար, իսկ գեղատեսիլ տեսարաններից օգտվել ցանկացողները կարող են մաքուր օդին նստել շատրվանների մոտ և զմայլվել Մասիս սարի տեսարանով: Իսկ ահա մեր շենքի մարգարիտը և նվերը բոլոր բնակիչներին դա լողավազանն է: Այո, Դուք կօգտվեք բարձրագույն չափանիշներին համա-պատասխանող բացօթյա լողավազանից, որը համալրված է բարձունքից սահելու խողովակով՝ Ձեր և Ձեր բալիկների ամառային պատմություններն անմոռա-նալի դարձնելու համար:

ԲԱԿԻ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ

Հավատարիմ լինելով մեր խոստումներին՝ բակի կանաչապատումն իրականացվելու է յուրօրինակ մշակաբույսերով, ծառերով և ծաղիկներով: Մեր այգեպաններն անում են ամեն ինչ, որպեսզի պատուհանից նայելիս, բակում զբոսնելիս, կամ նստարանին նստելիս Դուք զգաք մայր բնության գեղեցկությունը և լինեք նրա մի մասնիկը: Կանաչապատ գոտիներում Դուք հանդիպելու եք Եղևնի, Գիհու, Կոնիկա, Դրախտանոճու, Ծիմշատ , Կաղնի և այլ յուրօրինակ ու ինքնատիպ բույսերի, որոնց արմատներն ու տերևները մշակվում են հատուկ եղանակով՝ առավելագույն էսթետիկ գեղեցկություն ստանալու համար:

Չմոռանանք նաև նշել, որ համալիրի բակը պարսպված է ժամանակակից դիզայն ունեցող ցանկապատով, իսկ բակ մուտք գործելը հնարավոր է միայն պահակակետն անցնելու ճանապարհով: Եվ որ ամենակարևորն է՝ մենք ամբողջովին բացառել ենք մեքենաների մուտքը դեպի բակ, որպեսզի Ձեր և Ձեր սիրելիների անդորրն ու անվտանգությունն 24 ժամ շարունակ ապահովված լինի :

ԿԱՂՆԻ
ԹՈՒՅԱ
ԳԻՀԻՈՒ
ՍՈՃԻ
ԲՈՆՍԱՅ
ՍԱՄԾԻՏ
ԿՈՆԻԿԱ
ԵՂԵՎՆԻ

ՄԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ

- Ավտոկայանատեղի
- Կոնսյերժ ծառայություն (24/7)
- Անվտանգության ծառայություն (24/7)
- Նախասրահ հյուրերի համար
- Խաղահրապարակ
- Բացօթյա լողավազան՝ իր սահախողովակով
- Ֆուտբոլի դաշտ
- Բասկետբոլի դաշտ
- Հեծանիվների կայանման վայր
- Լանդշաֆտային դիզայնով այգիներ
- Ճեմուղիներ և վազքուղիներ
- Շատրվաններ
- Բակից բացվող տեսարաններ
- Սուպերմարկետ
- Ավտոմեքենաների լվացման կետ
- Մանկապարտեզ

ՄԵՐ ԾԵՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱՄԵՏՐԵՐՆ ԵՆ

Միաձույլ երկաթբետոնե կմախք՝
9-9,5 բալ սեյսմակայունությամբ

Կաթսայատուն

Ձայնա և ջերմամեկուսիչ երեսպատում

WITTUR

WITTUR ընկերության կողմից արտադրած
W LINE մոդելի վերելակները՝ ընհանուր 8 հատ

SCHÜCO

SCHUCO ընկերության արտադրության
ալյումինե էներգախնայող պատուհաններ՝
ձայնա և ջերմամեկուսիչ

Հակահրդեհային ահազանգման
և հրդեհաշիջման համակարգ

Պոմպակայան

Ջրի ռեզերվուարներ

Սեփական էլեկտրական ենթակայան

Տեսահսկման համակարգեր

Ինտերնետ և հեռախոսակապ

ՄԵՐ ԿԱՅԱՆԱՏԵՂԻՆ



Շենքում առկա է ստորգետնյա եռահարկ կայանատեղի՝ նախատեսված 340 մեքենայի համար: Բայց դա ամենևին Ձեր պատկերացրած բետոնային մութ և փոշոտ կայանատեղին չէ: Մենք կառուցում ենք նորագույն շինարարական և անվտանգության նորմերին համապատասխանող կայանատեղի, որտեղ Ձեր տրանսպորտային միջոցները կկայանեն ապահով և անվտանգ: Կայանատեղին ունի 24-ժամյա լուսավորություն, տեսանկարահանման և մոնիթորինգային համակարգեր, պահակակետ, վերելակներին արագ հասանելիություն, ինչպես նաև հակահրդեհային և հրդեհաշիջման համակարգեր: Կարևոր է իմանալ, որ հատակային ծածկույթը պատրաստված է հատուկ քարից, որը ոչ միայն տալիս է գրավիչ տեսք, այլ նաև ապահովում է անվտանգ երթևեկություն: Ձեր մեքենան ընթացային խնդիրներ չի ունենա տարվա որևէ եղանակի՝ թե կայանատեղի մուտք գործելիս, թե ելքի ժամանակ:

Հատակի երեսպատման շինանյութ



Terazzo

տեխնոլոգիայով պատրաստվող հանքաքարային խառնուրդ

ՄԵՐ ԾՔԱՄՈՒՏՔԸ

Կարծում եք միայն շենքի արտաքին տե՛սքն է զարմացնում և հիացնում: Առաջարկում ենք տեղափոխվել շենքի ներս և տեսնել, թե ինչ է Ձեզ սպասվում: Համալիրի շքամուտքերը ձևավորվել և նախագծվել են անկրկնելի ճաշակով՝ կրկին զուգակցելով դասականը և մոդեռնը: Շքամուտքն ընդարձակ է և լուսավոր, նրբաճաշակ և հարուստ, այն ամբողջովին պատված է հնդկական թանկարժեք կանաչ մարմարով, իսկ պատերը սպիտակ տրավերտինով և այլ բնական քարերով: Ժամանակակից դիզայնի լավագույն լուծումներով կահավորված նախասրահում Դուք կհանդիպեք ընդունարանի բարյացակամ աշխատակցուհուն, ով 24 ժամ շարունակ սպասարկելու է համալիրի բնակիչների տարաբնույթ պահանջները՝ դառնալով Ձեր հոգատար ընտանիքի մի մասնիկը: Ընդունարանում տեղակայված են բազմոցներ, սեղաններ և այլ կահավորանք Ձեր և Ձեր հյուրերի սպասելաժամանակը հետաքրքիր և արագանցիկ դարձնելու համար:

Հատակի և պատերի երեսպատման շինանյութ



Թանկարժեք հնդկական կանաչ մարմար

ՄԵՐ ԾՔԱՄՈՒՏՔԸ

ՄԵՐ ԾՔԱՄՈՒՏՔԸ

WITTUR

Մոտենալով վերելակների սրահին՝ Դուք կտեսնեք աշխարհահռչակ WITTUR ընկերության կողմից արտադրած W LINE մոդելի վերելակները: Այս ընկերությունը հիմնադրվել է 1968թ. Գերմանիայի Մյունխեն քաղաքում, և այսօր հանդիսանում է տեխնոլոգիապես ամենազարգացած ընկերություններից մեկն իր ոլորտում՝ գրանցելով 500-ից ավելի հեղինակային իրավունքներ և պատենդներ: Դուք հավանաբար լսել եք բազմաթիվ այլ վերելակ արտադրող ընկերությունների անուններ, բայց այս անվանումը հասանելի է միայն լավագույն բնակելի շենքերին: W LINE մոդելի վերելակները պատրաստված են հատուկ նրբագեղությամբ: Դրանք ընդարձակ են, անաղմուկ, արագ, հուսալի և հարմարավետ: Մենք անում ենք ամեն ինչ, որպեսզի վերելակում անցկացրած վայրկյանները Ձեզ համար լինեն իրապես հաճելի:

Մ Ե Ր Հ Ա Ր Կ Ը



Բարձրանալով Ձեր հարկ՝ տեսնում եք պերճաշուք ընդարձակ միջանցք, որն ուղեկցում է Ձեզ մինչև բնակարանամուտք: Միջանցքի հատակը և աստիճանավանդակը սալիկապատված է հատուկ ընտրված գրանիտի քարով: Ոչ, սա Ձեր պատկերացրած պրես-գրանիտը չէ, այլ իրական բնական քարը, որը պետք է ծառայի մեր բնակիչներին երկար տարիներ:

Բնակարանների մուտքի դուռը երկաթյա է՝ կահավորված բարձրորակ կաղնու փայտով: Այն ունենալու է կարմրափայտ ծառի գույն՝ հարկի արտաքին տեսքը հարուստ և ներդաշնակ դարձնելու համար: Մենք տեղադրում ենք այնպիսի դռներ, որ նույնիսկ ամենաքմահաճ և բծախնդիր բնակչի մոտ կորչելու է այն փոխելու ցանկությունը:

Բնակարաններում տեղադրվում են միջսենյակային բնական պեռլիտ հանքաքարից և այլ խառնուրդներից պատրաստված երկշերտ պատեր, որոնք ապահովում են ժամանակակից խիստ նորմերին համապատասխանող ջերմա և ձայնամեկուսացում: Մենք բազմիցս նշել ենք համալիրի մարդա-կենտրոն լինելու հավակնության մասին, ուստի Ձեր բնակարանների ներքին անդորրն ու հարմարա-վետությունը մեր առաջնային խնդիր-ներից մեկն է:

Հատակի երեսպատման շինանյութ

Թանկարժեք գրանիտի հանքաքար

Մ Ե Ր Հ Ա Ր Կ Ը

SCHÜCO



Այդ իսկ պատճառով նաև մենք կահավորում ենք Ձեր բնակարանները աշխարհահռչակ SCHUCO ընկերության կողմից արտադրված բարձրակարգ ալյումինե պատուհաններով: SCHUCO բռենդին ծանոթ մարդիկ լավ գիտեն ընկերության կողմից տրվող արտադրանքի որակի և հարատևության մասին: Այս պատուհանները համապատասխանում են աշխարհում գործող ամենաբարձր ստանդարտներին: Դրանք էկոլոգիապես կայուն են և թեթև, ունեն ուլտրամանուշակային ճառագայթներից հատուկ պաշտպանություն, ջերմակլանում, ջերմա և ձայնամեկուսացում: Այս պատուհաններով կահավորած բնակարաններն ապահովում են զգալի ֆինանսական խնայողություններ մեր բնակիչներին՝ ջեռուցման ծախսերի հետ կապված: Ի դեպ, բոլոր 408 բնակարանները, որոնցից երեքը յուրաքանչյուր մասնաշենքի վերջին հարկերում տեղակայված պենթհաուս բնակարաններն են, ունեն շրջապատկերային պատուհաններ:

ՄԵՐ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ

Իրենց երջանիկ գնորդներին են սպասում համալիրի կողմից առաջարկվող 405 բնակարան և 3 պենթհաուս: Բոլոր 3 մասնաշենքերում առկա են 1, 2 և 3 ննջարան ունեցող լուսավոր բնակարաններ, կամ ինչպես կենցաղում են ասում՝ 2, 3 և 4 սենյականոց բնակարաններ: Մեր հատակագծողները ջանք և եռանդ չեն խնայել բնակության համար հարմարավետ, պայծառ և ընդարձակ բնակարաններ ստանալու համար: Մեր բոլոր բնակարաններն ունեն բաց պատշգամբ և անկրկնելի տեսարաններ, այնպես, որ ընտրությունն այնքան էլ հեշտ չէ լինելու: Տիպային բնակարանների նախագծերը և ներքին հարդարման ու կահավորանքի տարբերակները ստորև ներկայացված են Ձեր դատին:

ՄԵՐ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ

Հյուրասենյակ

Խոհանոց

Սանհանգույց

Մ Ե Ր Բ Ն Ա Կ Ա Ր Ա Ն Ն Ե Ր Ը

Հյուրասենյակ

Բար-Խոհանոց

Մ Ե Ր Բ Ն Ա Կ Ա Ր Ա Ն Ն Ե Ր Ը

Ննջասենյակ 1

Ննջասենյակ 2

1

Այս գողտրիկ մեկ ննջարան ունեցող բնակարանը (2 սենյակ) նախագծվել է փոքրիկ ընտանիքների և միայնակ կացություն վարողների կյանքն առավել հարմարավետ դարձնելու համար: Բարեկեցիկ և լուսավոր այս տունն ունի բաց պատշգամբ՝ մուտքի հնարավորությամբ թե՛ ննջարանից, և թե՛ ճաշասենյակից: Սենյակների օպտիմալ դասավորությունը Ձեր առօրյան առավել ինքնատիպ և հանգիստ դարձնելու համար են:

Բնակարանն առկա է	Մասնաշենք Ա, Բ և Գ
Սենյակների քանակ	2
Բաց պատշգամբ	1
Սանհանգույց	1
Կայանատեղի	Գնում/Վարձույթ
Տեսարաններ	3 տեսարաններ
Ընդհանուր մակերես	Սկսած 57 քմ -ից
Գին	Սկսած 27,000,000 ՀՀԴ



2

Երկու ննջարան ունեցող այս նորաոճ և պայծառ բնակարանը (3 սենյակ) բարձրացնելու է Ձեր տրամադրությունն ամեն օր: Երկկողմանի անկյունային դիրքն ու երկու պատշգամբները ապահովում են օպտիմալ լուսավորություն բոլոր սենյակներում և բացում գեղատեսիլ բազմակողմանի տեսարաններ օրվա բոլոր ժամերին: Իսկ շնորհիվ գրագետ մշակված հատակագծի՝ Ձեր ընտանիքի բոլոր անդամները կստանան առավելագույն հարմարավետություն և անդորր:

Բնակարանն առկա է	Մասնաշենք Ա և Գ
Սենյակների քանակ	3
Բաց պատշգամբ	2
Սանհանգույց	2
Կայանատեղի	Գնում/Վարձույթ
Տեսարաններ	3 տեսարաններ
Ընդհանուր մակերես	Սկսած 100 քմ -ից
Գին	Սկսած 54,900,000 ՀՀԴ

3

Երկու ննջարան ունեցող այս կոկիկ և նորաձև բնակարանը (3 սենյակ) գտնվում է մեր համալիրի Ա և Գ մասնաշենքերի սրտում: Հատակագծային արդյունավետ լուծումներով հագեցած այս տանը Ձեր ընտանիքի յուրաքանչյուր անդամ կունենա առավելագույն հարմարավետություն և հանգիստ, իսկ շքեղ և ընդարձակ պատշգամբից Դուք կկարողանաք զմայլվել բազմազան տեսարաններով օրվա բոլոր ժամերին:

Բնակարանն առկա է	Մասնաշենք Ա և Գ
Սենյակների քանակ	3
Բաց պատշգամբ	1
Սանհանգույց	1
Կայանատեղի	Գնում/Վարձույթ
Տեսարաններ	5 տեսարաններ
Ընդհանուր մակերես	Սկսած 76 քմ -ից
Գին	Սկսած 41,800,000 ՀՀԴ

4

Մեր համալիրի հերթական գլուխգործոցը: Երկու ընդարձակ ննջարան ունեցող այս նրբաճաշակ և նորաձև բնակարանը (3 սենյակ) Ձեր ընտանիքին առաջարկում է լուսավոր օրեր տարվա բոլոր եղանակներին: Տարբեր կողմերում գտնվող երկու պատշգամբները բացում են անկրկնելի տեսարաններ Ձեր առօրյան ավելի ջերմ և գեղեցիկ դարձնելու համար, իսկ հատակագծային հատուկ լուծումներն ապահովում են ընտանիքի ներքին անդորրն ու հարմարավետությունը:

Բնակարանն առկա է	Մասնաշենք Ա և Գ
Սենյակների քանակ	3
Բաց պատշգամբ	2
Սանհանգույց	2
Կայանատեղի	Գնում/Վարձույթ
Տեսարաններ	5 տեսարաններ
Ընդհանուր մակերես	Սկսած 91 քմ -ից
Գին	Սկսած 50,150,000 ՀՀԴ

5

Այս նորաոճ և ընդարձակ երեք ննջարան ունեցող բնակարանը (4 սենյակ) կբավարարի նույնիսկ ամենաբծախնդիր գնորդին: Բնակարանի երկկողմ լուսավորությունը կապահովի Ձեր տան ջերմությունը, իսկ երեք պատշգամբների առկայությունը՝ բազմապիսի անմոռանալի տեսարանները: Հատակագծային ինքնատիպ լուծումներով այս բնակարանը ստեղծված է ողջ ընտանիքի անդորրն ու երջանկությունը ապահովելու համար:

Բնակարանն առկա է	Մասնաշենք Ա
Սենյակների քանակ	4
Բաց պատշգամբ	3
Սանհանգույց	3
Կայանատեղի	Գնում/Վարձույթ
Տեսարաններ	4 տեսարաններ
Ընդհանուր մակերես	Սկսած 137 քմ -ից
Գին	Սկսած 75,630,000 ՀՀԴ

6

Երեք ննջարան ունեցող այս ընդարձակ և լուսավոր բնակարանը (4 սենյակ) ապահովում է անձնական տարածություն և լիարժեք հանգիստ Ձեր ընտանիքի բոլոր անդամների համար: Երկկողմանի լուսավորությունն ու 2 բաց պատշգամբները կբացեն Ձեզ համար գեղեցիկ տեսարաններ և առավելագույնս երկար կպահպանեն արևի ջերմությունը Ձեր տանը: Իսկ ժամանակակից հատակագծային լուծումները գերհարմարավետ կդարձնեն Ձեր առօրյան:

Բնակարանն առկա է	Մասնաշենք Բ և Գ
Սենյակների քանակ	4
Բաց պատշգամբ	2
Սանհանգույց	3
Կայանատեղի	Գնում/Վարձույթ
Տեսարաններ	Մինչև 5 տեսարան
Ընդհանուր մակերես	Սկսած 133 քմ -ից
Գին	Սկսած 73,260,000 ՀՀԴ

7

Մեկ ննջարան ունեցող այս ընդարձակ բնակարանը (2 սենյակ) տրամադրում է գեղեցիկ և հարմարավետ ապրուստ փոքրիկ ընտանիքների համար: Ի շնորհիվ արդյունավետ մշակված հատակագծի՝ Ձեր ընտանիքի բոլոր անդամները ստանում են անձնական տարածություն աշխատանքի և հանգստի համար: Իսկ բաց պատշգամբի առկայությունը կապահովի ամառային եղանակի Ձեր զով երեկոները:

Բնակարանն առկա է	Մասնաշենք Բ
Սենյակների քանակ	2
Բաց պատշգամբ	1
Սանհանգույց	1
Կայանատեղի	Գնում/Վարձույթ
Տեսարաններ	1 տեսարան
Ընդհանուր մակերես	Սկսած 63 քմ -ից
Գին	Սկսած 29,750,000 ՀՀԴ

8

Երկու ննջարան ունեցող այս նորաոճ և ընդարձակ բնակարանը (3 սենյակ) Ձեր գեղեցիկ ապրուստի նոր գրավականն է: Անկյունային դիրքը և երկու բաց պատշգամբները օրերն ավելի լուսավոր, իսկ տան ներքին ջերմությունն ավելի բարենպաստ դարձնելու համար են: Բնակարանից բացվող անկրկնելի տեսարանները անտարբեր չեն թողնի և ոչ մի գնորդի: Իսկ ինքնատիպ հատակագիծը առավելագույնս հարմարավետ կդարձնի Ձեր առօրյան:

Բնակարանն առկա է	Մասնաշենք Բ
Սենյակների քանակ	3
Բաց պատշգամբ	2
Սանհանգույց	2
Կայանատեղի	Գնում/Վարձույթ
Տեսարաններ	3 տեսարաններ
Ընդհանուր մակերես	Սկսած 100 քմ -ից
Գին	Սկսած 54,400,000 ՀՀԴ

ՄԵՐ ՎԱՃԱՌՔԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ

Ժպտերես և պրոֆեսիոնալ անձնակազմը սպասում է Ձեզ Լենինգրադյան 30/3 հասցեով տեղակայված մեր գրասենյակում, որը կառուցվել և կահավորվել է բացառապես Տիգրան Մեծ համալիրի բնակարանների վաճառքի համար: Այստեղ Դուք կարող եք անզեն աչքով հետևել շինարարական աշխատանքներին, մեծ էկրանին դիտել նախագծին առնչվող տեսանյութեր և ուղեկցող փաստաթղթեր, քննարկել և ստանալ Ձեր բնակարանների հետ կապված բոլոր հարցերի պատասխանները և ի վերջո ըմբոշխնել մեկ գավաթ սուրճ կամ թեյ: Ձեր բնակարանները վաճառվում են անմիջապես կառուցապատողից՝ առանց միջնորդ ընկերության: Մենք իրապես արժևորում ենք ուղիղ, թափանցիկ և անմիջական հաղորդակցությունը մեր հաճախորդների հետ:

ՄԵՐ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ

Գույքի ընտրություն

1. Մասնագիտական խորհրդատվություն բնակարանի ընտրության հարցում:
2. Ընտրված գույքի համեմատական վերլուծություն այլ թաղամասերում և շենքերում առաջարկվող բնակարանների հետ:
3. Տեղեկատվության տրամադրում՝ թաղամասի հարակից տարածքում գործող հանգստի և զվարճանքի գոտիների, սննդի կետերի, զբոսայգիների, տրանսպորտային հանգույցների, բժշկական հաստատությունների և այլ առաջնային կարևորության օբյեկտների վերաբերյալ:

Բնակարանի ձեռքբերման և վերանորոգման վարկեր

1. Վարկի սպասարկման (մայր գումար և տոկոսադրույք) հետ կապված հաշվարկներ
2. Վարկունակության և վարկարժանության գնահատում՝ մինչ բանկ դիմելը
3. Բնակարանի ձեռքբերման վարկի հետ կապված տեղեկատվության տրամադրում
4. Փաստաթղթերի փաթեթի հավաքագրում և համապատասխանեցում
5. Վարկային դիմումի մուտք բանկ
6. Վարկային գործի ընթացքի հետ կապված տեղեկատվության տրամադրում
7. Փաստաթղթավորում և նոտարացում
8. Գրավի գրանցման աջակցություն

Դիզայն և կահավորում

1. Ինտերիերի դիզայն մեր գործընկեր ZAART ARCHITECTS -իկողմից:
2. Բնակարանների ներքին հարդարման ծառայություն
3. Բնակարանների կահավորման ծառայություն

ՄՈՏ ԳՏՆՎՈՂ ՍՈՒՊԵՐՄԱՐԿԵՏՆԵՐԸ*

Երևան Սիթի Դալմա Ծիծեռնակաբերդի խճուղի 3	1.6 կմ	5 րոպե
Կայզեր 23/6 Մարգարյան փ.	2.8 կմ	7 րոպե
Ծիրան 15 Ծինարարների փ.	2.5 կմ	5 րոպե
Մուսալեռ 33 Հալաբյան փ.	2.7 կմ	5 րոպե
Ծիրակ 2 Գրիգոր Հասրաթյան փ.	1.2 կմ	3 րոպե
ՍԱՍ 1ա Կիևյան փ.	1.1 կմ	3 րոպե

*Ծենքի տարածքում ևս գործելու է սուպերմարկետ

ՄՈՏ ԳՏՆՎՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՆՏՐՈՆՆԵԸ

Դալմա Գարդեն Մոլ Ծիծեռնակաբերդի խճուղի 3	1.6 կմ	5 րոպե
Երևան Մոլ 33 Արշակունյաց պողոտա	6.7 կմ	11 րոպե
Ռիո Մոլ 8 Վահրամ Փափազյան փ.	10 կմ	14 րոպե
Կայզեր 23/6 Մարգարյան փ.	2.8 կմ	7 րոպե
Մետրոյի կայան՝ Բարեկամություն	2.9 կմ	6 րոպե

ՄՈՏ ԳՏՆՎՈՂ ՀԱՆԳՍՏՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ

Երևան Պարկ	350 մետր	2 րոպե
Թումո այգի 16 Հալաբյան փ.	2.4 կմ	5 րոպե
Ծիծեռնակաբերդի զբոսայգի	850 մետր	3 րոպե
Մարզահամերգային Համալիր	700 մետր	2 րոպե
Հրազդանի կիրճ	2.4 կմ	5 րոպե
Բուենոս Այրեսի այգի Մարգարյան-Հալաբյան խաչմերուկ	2.3 կմ	7 րոպե

ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մաշտոցի պողոտա (Մալիբուի այգի)	5.2 կմ	7 րոպե
Դավթաշեն օղակաձև փողոց	5.5 կմ	10 րոպե
Գարեգին Նժդեհի հրապարակ	6.1 կմ	8 րոպե
Մալաթիայի օղակաձև փողոց	6.3 կմ	12 րոպե
Կասկադ Գաֆեսճյան Թանգարան	4 կմ	8 րոպե
Երևանի Պետական Համալսարան	7.2 կմ	12 րոպե
Օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոն	4.1 կմ	9 րոպե
Զվարթնոց օդանավակայան	10.9 կմ	13 րոպե

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Բնակիչների անվտանգությունը և հարմարավետությունը մեր առաջնահերթությունն է: Ուստի մենք խիստ պատասխանատու ենք վերաբերվում անվտանգության հետ կապված ցանկացած հարցին՝ սկսած շինարարական աշխատանքերից, մինչև մեր բնակիչների առօրյա կյանքը:

Շենքում գործելու են անվտանգության հետևյալ համակարգերը:

Կայանատեղիի, բակերի, շքամուտքերի և հարկերի տեսանկարահանում և տեսահսկողություն:

Կայանատեղին ապահովված է հակահրդեհային և հրդեհաշիջման համակարգերով:

Շքամուտքերում տեղակայված ընդունարանի աշխատակիցները հսկում են յուրաքանչյուր մասնաշենքի ներքին կարգն ու կանոնը:



Հսկիչ պահակակետ՝ շենքի բակային տարածք մուտք գործելու համար: Շենքը պարսպապատված է ժամանակակից դիզայնով պատրաստված ցանկապատով, որը երրորդ անձանց մուտքը դեպի բակ դարձնում է անհնար:

Բնակիչներին տրամադրվում է արագ արձագանքման հեռախոսահամարներ:

ՎԱՃԱՌՔԻ ԳՆԵՐ

Մեր համալիրում բնակարանների
գները սկսվում են

475 000 դրամից՝

մեկ քառակուսի մետրի համար

Մեր համալիրում բնակարանների գները տատանվում են՝ կախված հարկից ու տեղակայման դիրքից: Կատալոգում ներկայացված նյութերին ծանոթանալուց հետո մենք համոզված ենք, որ դուք ըստ պատշաճի գնահատեցիք մեր նոր համալիրի բոլոր հնարավորությունները և հարմարությունները, քանզի մենք չենք վաճառում քառակուսի մետր շինություն, այլ տրամադրում ենք Ձեր և Ձեր սիրելիների համար նոր կենսակերպ: Ուստի կարծում ենք, որ մեր բնակարանների վաճառքի գները նույնիսկ կարող են ցածր թվալ Ձեզ համար:

Հաշվի առնելով շենքի տեղակայման տարածաշրջանում ակտիվ կառուցապատման և կանաչապատման գործընթացը, ենթակառուցվածքների աննախադեպ զարգացումը, հանգստի և զվարճանքի գոտիների աճը, ինչպես նաև գնորդների շրջանում առաջացած մեծ հետաքրքրությունը՝ մեր համալիրի շինարարության զարգացմանն զուգընթաց մենք կանխատեսում ենք բնակարանների գների աճ: Ուստի դիմեք մեր վաճառքի գրասենյակի մասնագետներին Ձեր երազանքի տունն արագ ամրագրելու համար:

Մեր համալիրի գործընկեր բանկն է Ամերիաբանկ ՓԲԸ-ն, որտեղ Դուք կստանաք բարձրակարգ ծառայություններ և բարձրորակ խորհրդատվություն բնակարանի ձեռքբերման վարկերի հետ կապված: Մեր գնորդների համար գործում են ստորև ներկայացված պայմաններն ու սակագները:

- Կանխավճար՝ 10% (առանց երկրորդ գրավի պահանջի)
- Վարկի ժամկետ՝ մինչև 240 ամիս
- Վարկի արժույթ՝ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, ԵՎՐՈ
- Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք՝ ՀՀ դրամ 12%, ԱՄՆ դոլար 10%, ԵՎՐՈ 8%
- Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար՝ 0,5% վարկի գումարից, նվազագույնը 50,000 ՀՀ դրամ

Մեր վաճառքի գրասենյակի աշխատակիցները կաջակցեն Ձեզ վարկավորման ողջ ժամանակահատվածում և կտեղեկացնեն վարկի ընթացքի մասին:

RESIDENTAL COMPLEX «TIGRAN METS»

«ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐ

+374 33 272700

+374 33 002727

Վաճառքի գրասենյակ

Լենինգրադյան 31/3

Շենքի տեղակայում

Լենինգրադյան 27/7

sales@tmr.am

www.tigranmetsresidence.am

www.tmr.am